ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 828, www.court.am

Ն ԴԴ-3-Ե-6186

«02» օգոստոսի 2024թ.

«ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

(հասցե՝ ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30)

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

Սույնով ծանուցում եմ, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով (այսուհետ՝ Ընթացակարգ) Դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների և ամբողջը մեկում համակարգիչների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024թ. հուլիսի 17-ի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտարարվել է Ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2024թ. հուլիսի 29-ը ներառյալ՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածը:

Հիշյալ անգործության ժամկետում պայմանագիր կնքելու մասին որոշումը չի բողոքարկվել:

Տեղեկացնում եմ, որ 1-ին չափաբաժնի մասով կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է Համակարգի միջոցով և առաջարկում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները՝ պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ, ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների (Ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին (համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758) համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է գնվելիք ապրանքի գնման գնի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է գնվելիք ապրանքի գնման գնի 10 տոկոսը:

Հիշեցման կարգով հայտնում եմ, որ Ընթացակարգի շրջանակում 1-ին չափաբաժնի համար սահմանված գնման գինը կազմում է 55 080 000 ՀՀ դրամ:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ԴԱՎԻԹ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆ

Կապ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/19» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Մ. Հայրապետյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788